ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Կոտայքի մարզի Հատիսի Վ. Վարդանյանի անվան միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի ուսուցչի թափուր տեղի մրցույթի համար

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի Հատիսի Վ. Վարդանյանի անվան միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի ֆիզկուլտուրայի 12 /տասներկու դասաժամ/, ֆիզիկայի 6 /վեց դասաժամ/, աշխարհագրության 6 /վեց/ և դասվարի 20 /քսան դասաժամ/ ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր (ըստ ՀՀ ԿԳ նախարարի կողմից հաստատված հարցաշարերի):

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1):
2. Բարձրագույն կրթության մանկավարժության որակավորման աստիճանը հավաստող ավարտական փաստաթուղթ (դիպլոմ՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի I մասի պահանջի համապատասխան որակավորման վերաբերյալ):
3. Անձնագրի պատճենը:
4. Ինքնակենսագրություն (Ձև 5):
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում):
6. Մեկ լուսանկար՝ 3X4 չափի:
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք:
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:
9. Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: **Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև մայիսի 18-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-15:00, բացի շաբաթ և կիրակի օրերից:**

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա մայիսի 20-ին, ժամը 14:00-ին ՀՀ Կոտայքի մարզի Հատիսի Վ. Վարդանյանի անվան միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գյուղ Հատիս 1/1:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 093 35 91 89 հեռախոսահամարով: